

## ԳԼՈՒԽ 2

Հայաստան բաժնուած երկու մեծ ինքնակալութեանց՝ Բիւզանդական կայսրութեան եւ պարսից Սասանեան պետութեան մէջ, հարկատու երկուքին, ոտնակոխ երկուքեն՝ աննկարագրելի ալեկոծութեան մէջ կը ծփար շարունակ: Այս երկու մեծ տերութիւնք միեւնոյն հիւանդութեամբ վարակեալ՝ արտաքուստ զօրութեան փայլ մը ունէին, բայց ներքուստ երկուքն էլ հաւասար փտած եւ որդնոտած կործանման վիճակի մէջ էին:

Կոստանդնուպոլիս՝ ոսկեղէն գահույից վրայ նստող հռոմայեցուոց ինքնակալ կայսրը, որոմն բազկատարած պաղատանոք կը դիմէին մեր նախահարք, երբ Հազկերտ արքայից արքան քրիստոնէութիւնը բնաջինջ վերցնել կը սպառնար Հայաստանէն, այդ «Երանելին Թեոդորոս կայսրը, որ խաղաղասեր էր ի Քրիստոս» եւ անարգ հարկատու հոն Ատտիղասայ՝ այն Ատտիղասայ, որ Մեծին Վարդանայ բազկին զօրութեան առջեւ ընկրկեր էր ի Դարբանդ, Հազկերտի աչաց առջեւ, նոյն Ատտիղասայ, որ հռոմեական ինքնակալութիւնը կը դողացներ արեւելք եւ արեւմուտք, եւ որ այդ Երանելի Թեոդոս ջաջողելով թունաւորել ուր գթութիւնը կը գներ եւ ամէն արժանաւոր նախատիներ կը կլաներ: Եւ այդ կայսերութեան օրերը բարեբախտ ու երջանիկ էին արդի վիճակին հետ բաղդատելով. վասնզի հիմա երկու հարիւր տարի ժամանակ անցնելով ապականութիւնը իւր յետին աստիճանները գտեր էր.

կրօնամոլութիւն եւ անբարոյականութիւն, գոռոզութիւն եւ անարգութիւն, մեղկութիւն եւ անգթութիւն, շռայլութիւն եւ ազահութիւն, յանդնութիւն եւ վատութիւն, անխղճութիւն եւ խղճահարութիւն, միշտ մոլութիւնք, միշտ ծայրեր գարմանալի հակակշիռք կազմելով, բուն ճշմարիտ առաքիւնութիւն ոչ ուրեք, ոչ բանի մը մէջ կ'երեւար:

Թեոդոս Մեծէն վերջ այդ կայսերական գահույից վրայ իզուր բարձր մարդ կը փնտրէ ոք եւ դժուար թէ առանց աններելի պակասութեանց մէկը կարէնայ գտնել: Ամենէն հռչակաւորն Յուստինիանոս՝ օրէնսդիր, մեծագործ, յաղթող շնորհիւդ երկու քաջ զօրավարաց, ամենախոնարհ ծառայ է իւր կնոջ Թեոդորայի, որուն ամէն քմահաճույից եւ անիրաւութեանց գործիք կը դառնա ամէն րոպէ: Դիւցազնական քաջութիւնը նաեւ կերպարանափոխ եղած կը զարմացնէ զմարդ, երբ կը տեսնէ Բելիսար սարսափ թշնամեաց բանակներու, նեցուկ պետութեան յաղթութեամբ դարձած դափնիներով, իւր տան եւ կնոջ խայտառակութիւնքը պատմել խորհելու վայրկենին, կայսրուհուոյն մէկ նամակէն սոսկացեալ՝ իւր մեղաւոր կնոջ առջեւ տարածեալ ոտքերը կը պագնէ,